98. ՄԱՐԹԻՆ ՏԸԵՂԸ ՈՒՐԱՆ ՀՈՌՅԻՆ ՏՎՈՂ ԿՆԵԳՅԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր մին թաքուհի։ Ըտրանց ինիս ա մին մադար-գյուդար տղա։ Թա օրիշներինը տարավ ին մըծընաս, ըտրանց տրղան օրավ ար մըծընաս։

Մին խիլլա ժուկ-ժամանակ ա ընցնես, կյաս ա էտ տրղեն փըսըկելի վախտը։

Հարն ըսես ա.— Ա՛ բալա, ա աշկես սըվրսիպտակ, քյինի աշխարքըս ման եկ, քյըեզ հետե մին լավ, մարալ-չեյրան ախճիգյ օղե, հրրսանեքյ անինքյ։

Էտ տրղեն մարը պադրաստոթուն ա տրսնաս, պաշար ա պըդրըստես, տրղեն հղե տինիս։ Էտ տրղան շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, հըսնես ա մին հըղրցու խաշմերուկ, մին պառավ մարթ էլ սիպտակ մըրոքը չուրու կյոտկատեղը, էն ա ինիս ընդեղ նստած։

Էտ տրղան պարյոր ա տաս, թա ընցնե, էտ պառավ մարթն ըսես ա.— Ա՛ վերթի, ա՛ թըքըվերե տրղա, էտ իտի թայդի ըշտե՞ղ ըս քյինիս։

Էտ տրղան ըսես ա.— Քյիս ըմ ախճիգյ օղելի։ Համոթ չինի հըրցնելը, բա տու հո՞ւ վրս, պապե՛։

Էտ պառավ մարթն ըսես ա.— Ա՛ վերթի, վեր գյիդիր թա յըես հո՞ւ վրմ, հըրցնել չիր, յըես քու հոքյիտ հանողն ըմ, քու ճակատս-կյիրտ իտի յա կյիրած, վեր փըսակվելի օրըտ մըեռնիս։

Էտ տրղան վեր լըսես ա, ետ ա տրռնաս քյիս տոն։

Ծընողնին հրրցնես ըն, ըսես.— Ա՛ վերթի, պա խե՞ ետ ըս եկալ տեռտակրրոշ։

Տրղան լոխ նաղլ ա ընես։

Թաքավերը նան թաքուհին ըսես ըն.— Լոխ սոտ պեներ ա, հրվատալ մեր, իտի պեն չինիլ, ջադու պրռավու խոսկերք ա, էտ ա փրսրկվելի վախտրտ ընցնես ա, մունք էլ պրռավալ ընք, ռեդմա վեր ռազի կենաս։

Էլհա մին խիլլի վախտ ա ընցնես։

Էտ տրղան տրռնաս ա քրռասուն տրրեկան։ Ծընողնին ղաչանք-պրղատանք ըն ընես, վեր փրսակվե։ Էլհա էտ տրղան պրդրրստվես ա, ախճիգյ հավան կրնալի։

Էս դոնրմ մին օրուշ ճրնապարավ ա քյիս, ամմա էլհա համին էն պառավ մարթին ա ռուշահ կյաս։

Էտ տրղան պարյոր ա տաս, թա՝ քյինի, էտ մարթը ըտրան կրղնցնես ա ըսես.— Թաքավերի տրղա, էտ ըշտե՞ղ ըս քյինիս իտի թայդի։

Էտ տրղեն ըսես ա.— Քյինիս ըմ ախճիգյ հավան կրնալի, վեր փրսակվիմ։ Բա տու հո՞ւ վրս։

Էտ պառավ մարթը ըսես ա.— Ցրես քու հոքյիտ հանողն ըմ, վերթի։

Թաքավերին տրղան մետն ա քրցիս հորը նան մորը ասածնին, էլ մրհա՝լ չի քրցիս ըտրա ըսածեն, ընգնես ա հրղեն, քյիս։

Շատ ա քյիս, թա՝ խրեգյ ա քյիս, հրսնես ա մին քաղաք։ Էտ քաղաքին թաքավերը մին մադար ախճիգյ օնար։ Էտ տրղան հավան ա կրնաս, փրսրկվես, մեծ պեժինքյավ ետ տրռնաս ուրա՝ն հայրենիքյը։

Ծընողնեն օխտը օր, օխտը քրշեր հրրսանեքյ ըն ընես։ Հրրսրնքանը ետը, վեր ռեդմա էտ թա՝ղա՝ փրսակվածնին ուրա՝նց սերը վայելին, ռուրգա՝ն ըտրանց օթախին տոռնը թրկես ըն։ Տու մի ասիլ ըտրանց տրռանը քրշտեն, համին էն հոքյի հանող պառավ մարթն ա, եկալ ա, վեր փրսակեն առաչի քրշերը ուրա՝նց տրղեն հոքյին հանի։

Հա՝րը խնթրես ա, ղաչանք-պրղատանք ընես, ըսես.— Ա՛ ճակատակյիրը կրդարող ծուրունի, շատ ըմ խրնթրես, ըտրան ա՝վա՝ղը իմ հոքյիս հանե։

Էտ պառավ մարթը ռազի յա կրնաս։ Հորը հոքյին առնելիս, հա՝րը տրմնաս չի ցավեն, փրխչիս ա, ըսես ա.— Հուր հոքյի ըռնելի հետե եկալ ըս, ընդրա հոքյին էլ առ։

Ծտնան մարն ա կյաս, ղաչանք-պրղատանք ընես, ըսես.— Ա՛

հոքլի հանող ծուրունի, շատ ըմ խնթրես ըտրան ավաղը իմ հոքլիս հանե, մեխկ ա, ջահիլ ա, թող մուրազեն հըսնե։

Էտ պառավ մարթը ռազի յա կրնաս։ Լհա ուղիս ա, թա մորը հոքլին հանե, մարը տըմընաս չի՞, փըխչիս ա ուրան օթախը։

Էտ լոխ թազա հարսը տըսնաս ա, հալա ուրան մուրազեն հըսնելու, ըսես ա.— Ա՛ հոքլի հանո՞ղ, ա՛ հոքլի հանո՞ղ, իմ ազիզ, սիրած տղես, իմ թառլան նըշնածես ավաղը իմ հոքլիս հանե, շատ ըմ խընթրես։

Էտ ծուրունին տըսնալավ էտ թազա հարսին ազնիվ, պարի, ուրան նըշնածեն հետե ուրան շանը մըտան քըցող ըխճրկանը, ըսես ա.— Վեր տու իտի ազնեվ ըս, վեր տու իտի հավաղարիմ ըս, յըես էս տըղես հոքլին քյըեզ ըմ բըխշես, քյե՛ցեքյ ըպրեցե՛քյ օրախ, բախտավեր։— Ըսես ա պըրծընես, ինքյը ըթտըրաթտի տըռնաս։

Ըսես ըն հալա միչև ըսօր էլ մարթըկընեգյ ուրուր նըհետ ըպրես ըն հաշտ, մին խոսկու, էրկու շան մին հըլավում, էրկուսը մին շան, մին հոքլի տըեռած, մին պերցի, մինը մինին ըրևավը ուրթում ուտես...

Երգյինքան իրեք զամբուլ գյիլլաս կախ տվեն։ Մին զամբուլը՝ ըսողեն, մին զամբուլը՝ կյիրողեն, էն մին զամրուլն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողեն։